ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Սևան քաղաքի Գայի փողոց 67 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ

(1-ին հանրային քննարկում)

ք. Սևան *31.10.2025թ.*

2025թ. հոկտեմբերի 31-ին ժամը 15:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ք. Սևան, Նաիրյան փող. 164 շենք տեղի ունեցավ Սևան քաղաքի Գայի փողոց 67 հասցեում նախատեսված բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար: Հանրային քննարկմանը մասնակցել են Սևանի համայնքապետարանի աշխատակիցներ, նախաձեռնող և ՇՄԱԳ իրականացնող ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Լճաշենի բնակիչներ:

Նախագծի ներկայացում և քննարկում

Սևանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ՝ Հայկ Ղուկասյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը՝ նշելով, որ այսօր տեղի է ունենում Գայի փողոց 67 նախատեսված բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՇՄԱԳ առաջին հանրային քննարկումը, որի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է հանրության ծանուցում:

Այնուհետև նախագծի մանրամասները և բնապահպանական հարցերը ներկայանելու նպատակով նա խոսքը փոխանցեց բնապահպանության մասնագետ Քրիստինե Սահակյանին:

Ք. Սահակյանը մանրամասնեց, որ նախագիծը մշակվել է Սևանի համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ինչպես նաև Պատվիրատուի պահանջների համաձայն: Նա նշեց, որ բնակելի համալիրն իրենից ներկայացնում է 2 մասնաշենքերից կազմված շինություն: Առաջին մասնաշենքն իրենից ներկայացնում է 1 նկուղային, 3 կիսանկուղային և 9 վեգետնյա հարկերից կազված շինություն, իսկ երկրորդ մասնաշենքը նախատեսվում է իրականացնել 5 կիսանկուղային հարկերից: Վերգետնյա կառուցապատման մակերեսը կազմում է շուրջ 2272,2 քմ, ընդհանուր շինարարական մակերեսը կազմում է շուրջ 19874,00 քմ :

Նկուղային հարկը նախատեսված են ավտոկայանատեղիների համար: Այն ունենալու է երկակի նշանակություն՝ ըստ անհրաժեշտության ծառայելով նաև թաքստոց: Նկուղային հարկն ապահովված է լինելու օդափոխության և վթարային լուսավորության համակարգերով, սանհանգույցներով, այդ թվում՝ սահմանափակ կարողություններով անձանց համար: Այստեղ տեղակայված են լինելու նաև տեխնիկական սպասարկման սենյակները:

Տարածքն ապահովված է լինելու նաև բացօդյա ավտոկայանտեղիներով: Բակային հատվածի մոտ 600քմ տարածքում նախատեսված են լինելու ֆուտբոլի դաշտ, թենիս հաղահրապարակ, մանկական խաղահրապարակ, որոնց եզրագծերի երկայնքով նախատեսված են ծառուղիներ: Խաղահրապարակների տարածքը ծառուղիներով նաև առանձնացված է լինելու բացօդյա լողավազանի տարածքից:

Կիսանկուղային հարկերում տեղակայված են լինելու ինչպես բնակելի, այնպես էլ հասարակական տարածքներ: Առաջին հարկում նույնպես կտեղակայվեն բնակելի և հասարակական տարածքներ, իսկ երկրորդ հարկից սկսած մինչ 9-րդ հարկ՝ բնակելի տարածքներ: Բնակարանների մակերեսները տատանվում են 22-ից մինչև 66 քմ:

Շենքի գլխավոր մուտքերը կազմակերպված են լինելու վերգետնյա առաջին հարկից, որտեղից ստիճանավանդակների և վերելակների միջոցով ապահովվելու է կապը ստորգետնյա և վերգետնյա հատվածների միջև:

Մուտքը դեպի բնակելի համալիր նախատեսվում է իրականացնել Գայի փողոցից: Շինությունն ապահովված է անհարժեշտ բոլոր պայմաններով հաշմանդամների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի (ԲՍԽ) կենսագործունեության ապահովման համար:

Նախատեսվող բնակելի համալիրի էներգախնայողության և էներգաարդյունավետության ուղղությամբ լուծումները նախատեսում են համալիր միջոցառումներ երեսպատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների և վիտրաժների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ: Էներգախնայողության նպատակով համալիրում նախատեսված են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пеноплекс/, ջերմափոխանակիչների և այլնի կիրառում:

Այնուհետև Ք. Սահակյանը անդրադարձավ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրություններին: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները: Նա նշեց, որ բնապահպանական կառավարման պլանում ամփոփված միջոցառումները լինելու են շինարարության փուլում իրականացվող կատարումը Կապալառուի համար լինելու են պարտադիր:

Ք. Սահակյանը նշեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա, սակայն որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի:

Նա հավելեց, որ հողատարածքի մնացած հատվածը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Տարածքի 40.00% կամ շուրջ 2770քմ կազմելու են կանաչապատ և գեոցանցային կանաչապատ մակերևույթները, իսկ ասֆալտապատ հատվածները՝ սալված, ճանապարհ, մայթեր, շուրջ 1885քմ կամ 27 %:

Կանաչապատումը կիրականացվի հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցությունները կապված տվյալ տարածքի բնակելի և հասարակական նշանակության պայմանների բարելավմամբ, բարեկարգված և կանաչապատ տարածքի առկայությամբ և կայուն օգտագործմամբ:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

Հարց 1. Նախագծման թույլտվությունում առկա է վրիպակ, մասնավորապես՝ կառույցների ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին, հստակեցման կարիք ունի:

Պատասխան 1. «ԳՈՌ-ԴԱՎ» ՍՊԸ տնօրեն. Շնորհակալություն, հայտնաբերված վրիպակների վերաբերյալ բարձրաձայնելու համար: Դա մեզ հնարավորություն է տալիս, Սևանի համայնքապետարանի հետ համատեղ համագործակցությամբ, այս պահից սկսած հետամուտ լինել վրիպակների վերացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի իրականացմանը:

Սևանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ՝ Հայկ Ղուկասյանը ավելացրեց, որ բավական հետաքրքիր բազմաբնակարան համալիրի նախագիծ է առաջարկվել, ինչը իր տեսակի մեջ առաջինն է լինելու Սևան քաղաքի համար՝ ըստ առաջարկվող բնակելի, հասարարական և կենցաղային պայմանների բնույթի:

Ամփոփելով հանդիպումը նա շնորհակալություն հայտնեց մասնակիցներին և նշեց, որ մոտակա ավագանու նիստին այս հարցը կդրվի ավագանու քննարկմանը:

Մասնակիցների ցուցակը և հանրային քննարկման լուսանկարները ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

Հայկ Ղուկասյանը,
Սևանի համայնքապետարանի
քաղաքաշինության և հողաշինության
բաժնի պետի տեղակալ

Նախաձեռող՝

Կ. Ղազարյան,
«ԳՈՌ-ԴԱՎ» ՍՊԸ, տնօրեն